Որոշ տեսակետներ Ադրբեջանի համար թուրք-իսրայելական մրցակցության վերաբերյալ

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 30.11.2025 թ.[1]

Սեղմագիր

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է Թուրքիայի և Իսրայելի փոխհարաբերությունների բնույթի վերափոխումը՝ Ադրբեջանի վրա ազդեցության համար նրանց մրցակցության համատեքստում: Դիտարկվում է Անկարայի (երկարաժամկետ «փափուկ ուժ», պանթյուրքիզմի գաղափարախոսություն, հասարակության կողմնորոշում) և Թել Ավիվի (վերնախավի կողմնորոշում, ռազմատեխնիկական համագործակցություն, իրանական գործոն, էներգետիկ անվտանգություն) մոտեցումների էվոլյուցիան: Նշվում է, որ մինչև վերջերս Բաքվին հաջողվում էր արդյունավետորեն հավասարակշռել հարաբերությունները երկու ռազմավարական գործընկերների միջև, ինչն իր արտացոլումն է գտել 2020 և 2023 թթ. ռազմական գործողությունների ընթացքում նրանց միասնական աջակցության մեջ: Սակայն թուրք-իսրայելական երկկողմ հարաբերությունների արմատական վատթարացումը, որը սրվում էր 2023 թ. հոկտեմբերի դեպքերից հետո, հանգեցրեց նրանց ներհակության տեղափոխմանը ադրբեջանական հարթակ: Դիտարկվում են շահերի ուղղակի բախման մասին վկայող կոնկրետ դեպքեր: Ադրբեջանը կանգնած է առաջնային դաշնակցի ընտրության երկընտրանքի առջև՝ կորցնելով խուսանավելու գործիքները (ներառյալ էներգետիկ լծակը), ինչը հիմնարար մարտահրավերներ է ստեղծում աշխարհաքաղաքական փոփոխականության պայմաններում հանրապետության քաղաքական վարչախմբի կայունության համար:

Բանալի բառեր. *Ադրբեջան, Թուրքիա, Իսրայել, թուրք-իսրայելական հարաբերություններ, Հարավային Կովկաս, արտաքին քաղաքականություն, աշխարհաքաղաքական մրցակցություն, իրանական գործոն, էներգետիկ անվտանգություն, «Մեծ Թուրան», պաղեստինա-իսրայելական հակամարտություն, «Աբրահամի համաձայնագրեր», Լեռնային Ղարաբաղ, Բաքու–Թբիլիսի–Ջեյհան:*

Անկարայի և Թել Ավիվի հետ Բաքվի սերտ գործընկերային և դաշնակցային հարաբերությունների ձևավորման պահից ևեթ փորձագիտական հանրությունում հրատապ է դարձել այն հարցը, թե որտե՞ղ է անցնում սահմանը, որից այն կողմ Թուրքիայի և Իսրայելի շահերը կարող են հիմնարար հակասությունների բնույթ ստանալ ադրբեջանական ուղղության դեպքում:

Անկասկած, թուրք-իսրայելական մրցակցությունը նորանկախ հետխորհրդային Ադրբեջանում շարունակական բնույթ էր կրում: Այն պայմանավորված էր մերձկասպյան պետության վերնախավերի վրա իրենց ազդեցությունն առավելագույնի հասցնելու, Բաքվի աշխարհաքաղաքական բարեհաճությունն ապահովելու, էներգետիկ ռեսուրսներին և ռազմական ենթակառուցվածքներին հասանելիություն ստանալու, ինչպես նաև Ադրբեջանը որպես սեփական ռազմարդյունաբերական համալիրի արտադրանքի իրացման շուկա օգտագործելու երկու կողմերի ձգտմամբ: Առանձին դեպքերում այդ մրցակցությունը բավական սուր ձևեր էր ստանում, սակայն, դատելով ադրբեջանա-թուրքական և ադրբեջանա-իսրայելական հարաբերությունների դինամիկայից, Ադրբեջանում իշխող

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 17.11.2025 թ.:

վարչախմբին մինչև վերջերս հաջողվում էր հավասարակշռել հարաբերություններն իր երկու դաշնակիցների միջև՝ ակնհայտորեն նշելով նրանց համար սահմանները և թույլատրելի ազդեցության աստիճանը հանրապետության կենսագործունեության տարբեր ոլորտներում:

Թուրքիայի հետ Ադրբեջանի գործընկերությունը, որը հետագայում վերածվեց ռազմավարական դաշնակցության, նախաձեռնվել է 1990-ականների սկզբից՝ ԽՍՀՄ փլուզումից և Բաքվի ինքնիշխանության ձեռքբերումից անմիջապես հետո: Այդ հարաբերությունների ծագումը կապված է ոչ թե Ալիևների ընտանիքի քաղաքականության, այլ այն ազգայնական վերնախավերի գործունեության հետ, որոնք կարճ ժամանակ ղեկավարում էին մերձկասպյան հանրապետությունը: Նրանք բացահայտորեն հռչակում էին Թուրքիայի հետ մերձեցման ռազմավարական ուղեգիծը: Այս ընտրությունը պայմանավորված էր էթնո-լեզվական ընդհանրությամբ և, որ պակաս կարևոր չէ, Օսմանյան կայսրության կարճատև հովանավորության պատմական փաստով՝ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության նկատմամբ, որի իրավահաջորդը, ըստ սեփական սահմանադրության, իրեն համարում է ժամանակակից Ադրբեջանը:

Ադրբեջանա-թուրքական կապերը վերջին երեք տասնամյակի ընթացքում զարգացել են էվոլյուցիոն տրամաբանությամբ և առանց հարկադրական դինամիկայի, ինչը պայմանավորված էր Հարավային Կովկասի տարածաշրջանում և, մասնավորապես, Ադրբեջանում Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական ներկայության պահպանմամբ: Բացի այդ, այս գործընթացում նշանակալի դեր են խաղացել Ադրբեջանի բնակչության պատմաքաղաքակրթական և մտավոր առանձնահատկությունները, որոնք դարեր շարունակ ձևավորվել են Պարսկաստանի, ապա՝ Ռուսաստանի քաղաքական և մշակութային ազդեցության ուղեծրում:

Հաշվի առնելով թվարկված բոլոր գործոնները՝ Թուրքիան իր ներկայությունն Ադրբեջանում դրսևորել է աստիճանաբար և զուսպ՝ կիրառելով «*փափուկ ուժի*» գործիքները, ձևավորելով համաթյուրքական ինտեգրման անխուսափելիության գաղափարախոսությունը և դիմելով Ադրբեջանում հատկապես արդիական դարձած սեփական պատմական ինքնության որոնման խոսույթին: Անկարան համբերատար սպասում էր, թե երբ ադրբեջանական հասարակությունը մտավոր և մշակութային առումով կմիավորի թուրքական քաղաքակրթական մամլամայրի (матрица) կենսակերպն ու աշխարհայացքը, երբ հետխորհրդային վերնախավերը տեղը կզիջեն նոր կերտվածքի քաղաքական և այլ գործիչներին, ու երբ կփոխվի մի սերունդ, որի հետ աշխատանքն այլևս կապված չի լինի աշխարհայացքային դժվարությունների հետ: Ադրբեջանական հասարակության վրա անձերի մակարդակով ազդելու նման հետևողական ռազմավարությունը չէր կարող չապահովել Թուրքիայի հանդեպ Ադրբեջանի համակողմանի քաղաքական բարեհաճությունը, որը հայտեցակարգվել է Հեյդար Ալիևի հռչակած «Մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսով:

Ի տարբերություն Թուրքիայի՝ Իսրայելն Ադրբեջանի հետ գործընկերային և դաշնակցային հարաբերություններ հաստատելու լայնածավալ գործունեությունն սկսել է արդյունավետ իրագործել շատ ավելի ուշ՝ 2010-ականների սկզբից: Ընդ որում, այդ գործունեությունը հիմնականում կենտրոնացած էր վերնախավերի հետ աշխատանքի վրա և գործնականում չէր ազդում հասարակական լայն զանգվածների վրա: Հարավային Կովկասի հրեականությունն ու թյուրքախոս ազգությունները պատմաքաղաքակրթական, առավել ևս՝ էթնոգենետիկ առումով էական շփման կետեր չունեին, իսկ ադրբեջանական պետականությունը, հանդիսանալով 20-րդ դարի արգասիք, չէր կարող հրեական պետականության հետ հարաբերությունների պատմական փորձ և փոխներգործության որևէ կետ ունենալ: Այս համատեքստում երկու կողմերի հղումներն Ադրբեջանում հրեական համայնքի բազմադարյա բարեկեցիկ գոյությանը՝ իբրև երկու ժողովուրդների և պետությունների ամուր հարաբերությունների հիմք, ներկայանում են որպես ցուցադրական, սակայն առարկայական բովանդակությունից զուրկ դեկլարատիվ թեզ:

Պարսկաստանի սահմաններում, ապա նաև ռուսական իրավաենթակայության ներքո հրեական համայնքի մեկուսի բազմադարյա կյանքը ոչ մի կերպ չէր կարող հիմք հանդիսանալ Ադրբեջանի և Իսրայելի միջև դաշնակցային հարաբերությունների հաստատման համար, առավել ևս՝ տարածաշրջանում Թել Ավիվի աշխարհաքաղաքական համադրությունների վրա ազդող գործոն՝ դրանցում օգտագործելով Բաքվին:

Ադրբեջանա-իսրայելական դաշնակցային հարաբերությունների հիմքը և դրա որոշիչ գործոններն են իրանական գործոնը, Իսրայելի էներգետիկ անվտանգության հարցերը և ադրբեջանական բանակի տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով Ադրբեջանում իր նպատակներին հասնելու համար Իսրայելը կարիք չունի աշխատելու լայն զանգվածների հետ, նրա համար արդիական է միայն իշխող վարչակարգի և վերնախավերի հետ փոխգործակցությունը: Մասամբ դրանով էլ բացատրվում է ադրբեջանական հասարակության ճնշող մեծամասնության կողմից որպես «*հակահիսլամական ագրեսորի*» Իսրայելին չհանդուրժելու և Ադրբեջանում իշխող վերնախավի՝ նրա հանդեպ բացարձակ բարեհաճ վերաբերմունքի միջև առկա անհամաձայնությունը: Ադրբեջանի ղեկավարության կողմից Թուրքիայի և Իսրայելի հետ փոխգործակցության հաջող համադրման մասին առաջին հերթին վկայում են 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը և 2023 թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերջնական վերացման արարը: Այդ ժամանակաշրջանում Անկարան և Թել Ավիվը Բաքվի համար ոչ միայն կոնսենսուս ապահովեցին հայկական երկրորդ պետական կազմավորման զավթման և բռնի ոչնչացման հարցում, այլև ամենաանմիջական մասնակցություն ունեցան ռազմական գործողություններին: Բաց աղբյուրները նշում են, որ կողմերն Ադրբեջանին գրեթե հավասարապես աջակցել են սանձազերծված ռազմական արշավներում՝ նրան ապահովելով նորագույն տեխնոլոգիական զենքով,

հետախուզության և կապի տեխնիկական միջոցներով, հրամանատարական մակարդակի հրահանգիչներով և խորհրդատուներով, հատուկ նշանակության ստորաբաժանումներով և այլն: Ղարաբաղյան խնդրի ուժային լուծման հարցում Անկարայի և Թել Ավիվի շահագրգռվածությունը, որը Բաքվի համար արտակարգ նշանակություն ուներ և հանգեցրեց տարածաշրջանում ուժերի նոր հավասարակշռության հաստատմանը, թույլ է տալիս խոսել այն մասին, որ Թուրքիան և Իսրայելը կոնսենսուս են ունեցել Հարավային Կովկասի ապագայի և դրանում դաշնակից Ադրբեջանի նոր դերի վերաբերյալ:

Սակայն Բաքվի հետ տարվող աշխատանքում Թուրքիայի և Իսրայելի միջև փոխզիջման ու միաժամանակ մրցակցության աստիճանը որոշվում էր ոչ միայն անմիջապես ադրբեջանական ուղու վրա նրանց շահերով, այլև զգալի չափով ձևավորվում էր թուրք-իսրայելական հարաբերություններում փոխգործակցության և հակասությունների ողջ տարրապատկերի ազդեցության ներքո: Անկարան և Թել Ավիվը փաստորեն սերտ գործընկերներ էին հրեական պետության հիմնադրումից ի վեր: 1949 թվականին Թուրքիան դարձավ առաջին մահմեդական երկիրը, որը պաշտոնապես ճանաչեց Իսրայել պետությունը: 1952 թ. Թուրքիան դարձավ ՆԱՏՕ-ի անդամ, իսկ 1987 թ. ԱՄՆ-ն Իսրայելին շնորհեց «*ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակցի*» կարգավիճակ:

Անկարայի և Թել Ավիվի միջև ռազմաքաղաքական դաշնակցության մասին պայմանագիր գոյություն չունի: Սակայն, հաշվի առնելով ԱՄՆ-ի առաջատար դերը Հյուսիսատլանտյան դաշինքում և Իսրայելի հատուկ դերն ԱՄՆ-ի մերձավորարևելյան դոկտրինում, Անկարայի և Թել Ավիվի մերձեցումը, ինչպես նաև հաշվի առնելով Վաշինգտոնի գլխավորած նատոյական դաշինքի գլոբալ շահերը տարածաշրջանում, գործողությունների համաժամանակացումը և համաձայնեցումը գրեթե անխուսափելի էին: Կողմերը սերտ առևտրատնտեսական հարաբերություններ են հաստատել (այդ թվում՝ 1996 թ. «Ազատ առևտրի պայմանագիրը»՝ մաքսատուրքերի փոխադարձ վերացմամբ), ինչպես նաև ավելի վաղ ամուր համագործակցություն ռազմաարդյունաբերական համալիրի արտադրանքի մատակարարման, հետախուզական տվյալների փոխանակման, նաև ռազմատեխնիկական փոխգործակցության այլ ոլորտներում՝ ինչպես Իսրայել–ՆԱՏՕ հարաբերությունների շրջանակներում, այնպես էլ Իսրայել–Թուրքիա երկկողմ ձևաչափով:

Անվիճելի էր ԱՄՆ-ի առանցքային դերն այդ գաղտնի «մերձավորարևելյան դաշինքի» ձևավորման գործում. հենց Վաշինգտոնն էր հանդես գալիս որպես Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերությունների հավասարակշռության կարգավորող, որն անհրաժեշտ է Առաջավոր Ասիայում ԽՍՀՄ-ի, ապա նաև Ռուսաստանի աշխարհառազմավարական զսպման համար: Միջազգային ասպարեզից ԽՍՀՄ հեռանալուց և ՌԴ-ի ներցիոն թուլացումից հետո ՆԱՏՕ-ի և Վաշինգտոնի համար նկատելիորեն նվազեց այդ հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը: Բացի այդ, սկսած 1990-ականներից, այս գործընթացում նշանակալի դեր խաղացին Իրանի խնդրի, Արաբական օրակարգի և ընդարձակ

տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքի վերաբերյալ ԱՄՆ քաղաքական վերնախավերի և խմբակցությունների մոտեցումների տարաձայնությունները, ինչը պատճառ դարձավ այնտեղ ձևավորված կարգի ապաինտեգրմանը: Այս պայմաններում Թուրքիան և Իսրայելն աստիճանաբար սկսեցին ավելի ինքնուրույն տարածաշրջանային քաղաքականություն վարել, ինչը տարածաշրջանային քաղաքականության բազմաթիվ հարցերի շուրջ շահերի հնարավոր բախման վտանգ էր կրում իր մեջ:

Թուրք-իսրայելական հարաբերություններում հակասությունները տարիներ շարունակ կուտակվել են, սակայն դրանց մեկնակետն ընդունված է համարել այսպես կոչված «*Ազատության նավատորմի*» հետ կապված 2010 թ. մայիսի վերջին տեղի ունեցած միջադեպը, որից հետո հարաբերությունների ճգնաժամը միայն խորացել է մինչ օրս: ԱՄՆ տարբեր վարչակազմերի, ինչպես նաև ԵՄ ներկայացուցիչների և տարածաշրջանային այլ միջնորդների բազմաթիվ ջանքերը՝ հավասարակշռելու այդ հարաբերությունները և վերադարձնելու նախկին հոլովույթ, հաջողությամբ չպսակվեցին՝ հաշվի առնելով տարածաշրջանում Անկարայի և Թել Ավիվի վեկտորների ուղղությունների տարբերության առարկայական հանգամանքները, ինչպես նաև առաջնորդներ Ռ. Թ. Էրդողանի և Բ. Նեթանյահուի փոխադարձ հակակրանքի սուբյեկտիվ գործոնը:

Ճգնաժամն իր գագաթնակետին հասավ Իսրայելի վրա ՀԱՄԱՍ-ի 07.10.2023 թ. հարձակումից և, դրան հաջորդած, Գազայում ու պաղեստինյան այլ տարածքներում ՑԱՀԱԼ-ի գործողություններից հետո: Պաղեստինա-իսրայելական հակամարտության նոր փուլը նպաստեց Թել Ավիվի և Անկարայի միջև քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների գրեթե լիակատար փլուզմանը, նրանց ռազմատեխնիկական համագործակցության «*մնացորդային*» ծրագրերի դադարեցմանը և տեսանելի առևտրատնտեսական հարաբերությունների ռեկորդային նվազագույնի հասցմանը:

Հակասություններն ընդգրկել և խորացել են, փաստորեն, տարածաշրջանային խնդիրների ամբողջ այն տարրապատկերում, որոնց այս կամ այն չափով առնչվում են կողմերը: Դրանցից հիմնականներն են սիրիական օրակարգը, իրանական խնդիրը, Արևելյան Միջերկրականում ուժերի ապագա հավասարակշռության հետ կապված հարցերի համալիրը, Կիպրոսի հակամարտությունը, քրդական գործոնը և այլն:

Իրավիճակն այն աստիճան է սրվել, որ Իսրայելի կառավարության կողմից ստեղծված հատուկ մարմինը, այսպես կոչված «*Նագելի կոմիտեն*», Անկարայի ռազմական ներուժի և տարածաշրջանում նրա ռազմաքաղաքական գործողությունների դինամիկայի մանրամասն ուսումնասիրությունից հետո հրեական պետության իշխանություններին խորհուրդ է տվել Թուրքիայի հետ պատերազմի պատրաստվել: Կոմիտեի զեկուցողների կարծիքով՝ Թուրքիան Իսրայելի համար հնարավորինս ավելի շոշափելի սպառնալիք է ներկայացնում, քան Իրանը:

Իր հերթին, թուրքական ռազմաքաղաքական վերնախավն զգալիորեն արմատականացրել է հակաիսրայելական հռետորաբանությունը, իսկ հասարակության

մեջ աշխուժորեն հակասեմական տրամադրություններ են մշակվում: Հրեական պետության դեմ քաղաքական-քարոզչական արշավի տրամաբանական հետևանքն էր 2025 թվականի նոյեմբերի սկզբին Ստամբուլի դատարանի կողմից տրված Բենիամին Նեթանյահուի և Իսրայելի կառավարության և բանակային հրամանատարության ևս 36 ներկայացուցիչների ձերբակալման հրամանը՝ Գազայում «*ցեղասպանություն*» կազմակերպելու մեղադրանքներով: Մի շարք փորձագետների կարծիքով, դա Անկարայի պատասխանն էր Գազայում նախատեսվող խաղաղապահ զորախմբի կազմում թուրքական ստորաբաժանումներն ընդգրկելու Թել Ավիվի վճռական մերժմանը:

Հարկ էր սպասել, որ հարաբերությունների կրիտիկական սրման պայմաններում Թուրքիայի և Իսրայելի միջև կոնսենսուսը ադրբեջանական ուղու վրա կվերացվի: Եվ եթե կողմերը, չնայած ճգնաժամին և ի հայտ եկող թշնամանքի հստակ նշաններին, մինչև վերջերս փորձում էին խուսափել Ադրբեջանում շահերի ուղղակի բախումից, իսկ Բաքուն բավական հաջող խուսանավում էր նրանց միջև, ապա այժմ նախկին հավասարակշռության պահպանումը խիստ խնդրահարույց է դառնում:

Այս համատեքստում ցուցիչ օրինակ կարող են ծառայել իսրայելական աղբյուրների տվյալները, ըստ որոնց հենց Թուրքիայի ճնշումն է կանխել, այսպես կոչված «*Աբրահամի համաձայնագրերին*» Ադրբեջանի անդամակցության գործընթացը, ինչին Թել Ավիվն ու Վաշինգտոնը համառորեն դրդել են Ի. Ալիևին: Անկարան, ըստ առկա տեղեկատվության, այդ ծրագիրը գնահատել է որպես Բաքվում իր դիրքերի թուլացման սպառնալիք, ինչպես նաև իրանա-ադրբեջանական ռազմական հակամարտության մեջ ներգրավվելու հնարավոր վտանգ, որը, Թեհրանի հավաստմամբ, անխուսափելի կդառնա «Աբրահամական ակումբին» Բաքվի անդամակցության դեպքում: Ակնհայտ է, որ նույն համատեքստում պետք է մեկնաբանել եվրոպացի ռաբբիների հանկարծակի հրաժարումը Բաքվում արդեն ծրագրված խորհրդաժողով անցկացնելուց՝ իբր անվտանգության նկատառումներից ելնելով: Որոշ տեղեկությունների համաձայն, չեղարկման նախաձեռնողը, այնուամենայնիվ, Ադրբեջանն է, որը ստիպված է այդ քայլին դիմել Անկարայի սաստիկ ճնշման ներքո: Բացի այդ, կա ենթադրություն, որ Անկարային խիստ նյարդայնացնում է Գազայում խաղաղապահ զորախմբի կազմում ադրբեջանցի զինվորականների մասնակցության հնարավորությունը: Հաշվի առնելով այս նախաձեռնությանը Թուրքիայի մասնակցության հեռանկարների բացակայությունը՝ Իսրայելի բարեհաճությունն ադրբեջանցիների հանդեպ չի կարող խանդ չառաջացնել Անկարայի համար, քանի որ Գազայի խաղաղապահ գործողությանը Բաքվի ներգրավումը ևս մեկ լրացուցիչ գործոն կդառնա Ադրբեջանում իսրայելական ազդեցության ամրապնդման համար:

Թուրքիայի և Իսրայելի՝ ադրբեջանական հարթակ նետված պայքարի խստացման նշաններն այնքան ակնհայտ են, որ նպաստում են Վրաստանի օդային տարածքում

թուրքական ՌՕՈՒ ռազմատրանսպորտային ինքնաթիռի 12.11.2025 թ. վթարի հետ կապված միջադեպին Իսրայելի իբր մասնակցության մասին լուրերի ակտիվ տարածմանը: Համաձայն այդ տարածված խոսույթների, որոնք աջակցություն են գտնում նաև թուրքական ԶԼՄ-ների մի շարք մեկնաբանների կողմից, Թել Ավիվը սկսել է խիստ բացասական վերաբերմունք դրսևորել թուրք-ադրբեջանական փոխգործակցության աճող դինամիկայի նկատմամբ, մասնավորապես՝ ռազմական ոլորտում:

Եթե Թուրքիայի և Իսրայելի ռազմական բախումը ինչ-որ փուլում ինչ-որ ձևով և աշխարհաքաղաքական որևէ հարթակում իսկապես տեղի ունենա, դա կնշանակի, որ կամ ԱՄՆ-ն ի վիճակի չէ վերահսկել իրավիճակը, կամ միտումնավոր կողմերին բերում է նման հանգուցալուծման: Երկու դեպքում էլ Բաքվին հազիվ թե հաջողվի առանց արևմուտքի աջակցության խուսափել իր տարածքում հակամարտության տարածումից, քանի որ Թուրքիան և Իսրայելը հասցրել են այնտեղ ամրապնդել իրենց ամուր դիրքերն ու նախանշել շահերը: Այդ դեպքում իշխող վարչախմբի մոտ առկա բոլոր գործիքները, որոնք թույլ են տալիս մինչ վերջերս խուսանավել և պահպանել Ադրբեջանի՝ որպես թուրք-իսրայելական վեճերի կարգավորողի վարկանիշը, կարող են անհետանալ: Ի թիվս այլ հանգամանքների, խոսքը կարող է վերաբերել Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղին, որը մինչ վերջերս Բաքվին թույլ էր տալիս ոչ միայն զգալի բյուջետային եկամուտներ ապահովել դեպի Իսրայել էներգակիրների արտահանումից, այլև Անկարային և Թել Ավիվին ետ պահել ադրբեջանական հարթակի վրա կտրուկ սրացումից: Որոշակի փուլում Թուրքիան կարող է հրաժարվել ադրբեջանական նավթի տարանցման հնարավորություն ընձեռելուց, կամ Իսրայելն ինքը կարող է հրաժարվել ադրբեջանական նավթի արտահանումից (որոշ տվյալներով՝ Թել Ավիվն արդեն իսկ ակտիվ աշխատանք է տանում մատակարարումների բազմազանացման ուղղությամբ), ինչը խիստ բացասաբար կանդրադառնա ոչ միայն ադրբեջանական տնտեսության վրա, այլև Բաքվին կզրկի Թուրքիայի և Իսրայելի միջև շահերի հավասարակշռման կարևոր գործիքից:

Ամփոփելով վերլուծությունը՝ հարկ է նշել, որ պաշտոնական Բաքուն արդեն իսկ կանգնած է Թուրքիայի և Իսրայելի հետ իր հարաբերությունների առաջնահերթության որոշման երկընտրանքի առջև: Իրավիճակի բարդությունն այն է, որ երկու գործընկերներն էլ այդ հանրապետությունում արդեն ունեն բավարար ազդեցության գործիքներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում լուրջ ներքին և աշխարհաքաղաքական խնդիրներ ստեղծեն նրա համար: Ընդ որում, նրանք հավասարապես չեն հրաժարվի Ադրբեջանի ռազմաքաղաքական և ֆինանսատնտեսական վերնախավերին իրենց օրակարգն առաջադրելու հնարավորությունից:

Թուրքիայի համար Ադրբեջանը կարևոր է ոչ միայն որպես հուսալի դաշնակից, որն ապահովում է Անկարայի դիրքերի ամրապնդումը երկու դար առաջ իր կորցրած Հարավային Կովկասի տարածաշրջաններում, այլև որպես աշխարհաքաղաքական

հենակետ Կենտրոնական Ասիա իր ծավալումը շարունակելու համար՝ «*Մեծ Թուրանի*» գաղափարախոսության իրագործմանն ընդառաջ:

Իսկ Իսրայելն Ադրբեջանը դիտարկում է որպես իսլամական աշխարհի միջավայրից հուսալի դաշնակցի՝ պետականության աշխարհիկ համակարգով, ինչպես նաև իր ավանդական հակառակորդի՝ Իրանի նկատմամբ զսպման և աշխարհաքաղաքական վերահսկողության հեռանկարային հարթակի:

Հարավկովկասյան հանրապետության լիակատար բարեհաճության համար Անկարայի և Թել Ավիվի մրցապայքարում խաղադրույքներն այնքան բարձր են, որ ճնշումն իշխող վարչակարգի վրա, ինչպես սպասվում է, միայն կուժեղանա:

Ադրբեջանական ուղու վրա թուրք-իսրայելական մրցակցությունը ևս մեկ լուրջ փորձություն է Բաքվի համար, որն արդեն Արևմուտքի և Իրանի, ինչպես նաև Արևմուտքի և Ռուսաստանի շահերի բախման հարթակ է հանդիսանում: Սա հերթական մարտահրավեր է գլոբալ դերակատարների բախման աշխարհառազմավարական գոտում հայտնված այդ հանրապետության հավասարակշռությանը և այնտեղ իշխող քաղաքական վարչախմբի ամրության ստուգում: